ՀՏԴ : 929:37(479.25)Աբովյանց

Doi:10.54503/0135-0536-2023.2-232

ՀՈՎՍԵՓ ԱԲՈՎՅԱՆՑՆ ՈՒ ՆՐԱ ՋՐԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ*

ԱՆԻ ՍԱՐԱՏԻԿՅԱՆ

Բանալի բառեր՝ Հովսեփ Աբովյանց, Տավուշ, Կոթի, Բարեկամավան, Ալավերդի, ընտանեկան արխիվ, օրագիր, հուշաղբյուր, ջրհոր, ճանապարհ, շինարարություն:

Նախաբան

XIX–XX դդ. ակտիվ ջրաշինարարական աշխատանքներ էին ընթանում ամբողջ Հայաստանում[1]: Առանձին շրջաններում այդ գործընթացը նույնպես բուռն ընթացք ուներ. օրինակ՝ Իջևանի շրջանում (այժմ՝ Տավուշի մարզում) ջրաշինարարական առանցքային կետերից էր Ջողազի ջրամբարի կառուցումը[2], որի հիմնանպատակն էր ոռոգման ջրով ապահովել սահմանամերձ Կոթի, Բարեկամավան, Ոսկեվան, Բաղանիս և մի քանի այլ գյուղերին:

Տավուշի սահմանամերձ գյուղերի ջրամատակարարման հարցերի մասին առանձնակի կարևորություն ունեն պահպանված ձեռագրերն ու արխիվային փաստաթղթերը: Այդպիսի մի նորահայտ ձեռագիր-աշխատանք է Հովսեփ Մկրտչի Աբովյանցի օրագիր-հիշատակարանը, որը պահվում է նրա ընտանեկան արխիվում և փոխանցվում է սերնդեսերունդ: Այնտեղ կան նրա կյանքի և գործունեության մասին խիստ կարևոր էջեր[3]:

Հ. Աբովյանցը (1841–1918 թթ.) ծնվել է Վրաց-իմերեթական նահանգի, Ելիզավետպոլի գավառի Ղազախի շրջանի Կոթի գյուղում (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզի Կոթի գյուղում), սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, այնուհետև՝ Պետերբուրգում, եղել է ինժիներ, շինարար: Յոթ տարի ուսուցչական պաշտոն վարելով Սղնախում (Վրաստան)՝ վերադարձել է հայրենի գյուղ և իրեն նվիրել ուսուցչությանն ու հասարակական գործունեությանը[4]: Այստեղ նա դպրոց է հիմնում, կառուցում ջրաղացներ, աղբյուրներ: Հ. Աբովյանցի անու-

---

* *Ներկայացվել է 11. I. 2023 թ., գրախոսվել է 14. I. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի աջակցությամբ՝ 21AG6A080 ծածկագրով թեմայի շրջանակում:*

[1] *«Նոր-Դար» (Թիֆլիս), 24. VII. 1884, «Արձագանք» (Թիֆլիս), 18. V. 1886, «Մշակ» (Թիֆլիս), 12. I. 1895, 19. VII. 1900, Մեսրոպ Մագիստրոս Արքեպիսկոպոս. 1936, 78–82, Շիրմազան. 1962, «Երեկոյան Երևան», 12. VII. 1966:*

[2] *Արեշյան, Սիմոնյան, Գասպարյան. 1987, 6–7:*

[3] *Աբովյանց. 1918:*

[4] *Ղազարյան. 2021, 275:*

նը կապվում է Կոթիի պատմության կարևոր էջերին, որոնք էլ նրան արժանացրել են տեղացիների տված «Մեծ վարժապետ» կոչմանը: Բանավոր պատմություններում հատկապես հիշվում է նրա կարևոր գործերից մեկը՝ կապված Կոթի գյուղի սահմանները ճշտելու և քարտեզագրելու հետ[5]: Ասում են, որ հայ-աղրբեջանական սահմանի այդ հատվածում մի քար է անձամբ պայթեցրել և դրել իբրև բաժանարար (նկ. 1)[6]:

Նկ. 1. Աբովյանցի դրած սահմանաքարը:

Աբովյանների ընտանեկան արխիվում պահպանված արխիվային փաստաթղթերում, կարևոր տեղ է գրաղեցնում Կոնստանտին Աբովյանի 2001 թ. կազմած տոհմածառն ու հուշագրությունը[7], որի մեջ նա Հ. Աբովյանցի մասին հիշատակում է հետևյալը. «Իմ պապի՝ Հովհաննես Աբովյանի եղբայրը՝ Հովսեփ Մկրտչի Աբովյանը, ապրել է վերջին տարիներին մենակության մեջ, վախճանվել է 1918 թ. հոկտեմբերի 10-ին, 77 տարեկան հասակում: Նա եղել է Կոթի գյուղում և նրա շրջակայքում ճանաչված և հարգված անձնավորություն: Իր գրագիտությամբ, կրթվածությամբ, գիտելիքներով, մարդկանց տրվող խելամիտ խորհուրդներով, ինչպես նաև անձնական միջոցների հաշվին ծննդավայր Կոթի գյուղում ջրմուղ և աղբյուրներ կառուցելու համար (որոնք գործում են մինչև հիմա) ձեռք է բերել համբավ և հարգանք: Երիտասարդ հասակում նա աշխատել է նավթահանքերում, ինչպես նաև հայ նավթարդյունաբերող հայտնի Մանթաշովի մոտ որպես տնտեսության կառավարիչ, իսկ 1895–1902 թվականներին աշխատել և դասավանդել է Թիֆլիսի հայկական Ներսիսյան դպրոցում»[8]:

Տեղացիների շրջանում շատ է խոսվել և պատմվել Աբովյանցի հնարամիտ մտքի ու ռազմական տաղանդի մասին, որը մեծապես դրսևորվել է գյուղի ինքնապաշտպանության ժամանակ մղված մարտերի ժամանակ (1905 թ.): Թեպետ նա մինչ այժմ հիշվում է ժողովրդին մատուցած իր մեծ ծառայությունների համար, սակայն նրա մասին գրավոր տեղեկություններ քիչ են պահ-

[5] *Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետ՝ ԴԱՆ). 2022, Տավուշի մարզ, գ. Կոթի, բանասաց՝ Ստեփան Վերանյան:*

[6] *Ղ ա զ ա ր յ ա ն. 2021, 276:*

[7] *Ա բ ո վ յ ա ն. 2001, 1–23:*

[8] *Ա բ ո վ յ ա ն. 2001, 1–2:*

պանվել: Պահպանված կարևոր աղբյուրներից մեկն էլ օրագիր-հիշատակարանն է:

Օրագրում հիշատակվող աղբյուրները

Ձեռագիր այդ աշխատանքում, ի թիվս բազմաթիվ այլ տեղեկությունների, կարևոր մաս են կազմում աղբյուրների, ջրաղացների կառուցմանն առնչվող տվյալները[9], ինչպես, օրինակ, նրա ձեռնարկած առաջին աղբյուրի կառուցման պատմությունն է, որն էլ հետագայում դարձավ իր հիշատակը հավերժացնող հուշաղբյուր (նկ. 2): Աղբյուրի սկզբնական կառուցման մասին Աբովյանցն իր օրագրում գրում է. «1874 թ. Գնեցի խեչկանց այգին աղբյուր և ճանապարհ շինելու պատճառով: Շինեցի դիմաց ճանապարհը և մեջ գցելով չափարեցի: Նույն թվականին սկսեցի աղբյուրի շինումը ու հիշյալ այգուց մի մասը թողնելով աղբյուրիս՝ այնտեղ ջրաղաց, բաղնիք և դարբնոց, դուքան շինելու համար, ծախսը հասնում է 875 ռուբլի[10]: 1874 թ. Սեպտեմբեր 30-ին աղբյուրը հասցնելով մինչև նոր փորված ջրտարի սկզբի քարկապը[11] և Ռուսաստան վերադառնալու պատճառով ժամանակավորապես անկատար թողի այնտեղ, որ ջրի հիմավորումը փորձով հաստատապես գիտենալուց հետո սկսեմ շարունակել և հիմնավորապես վերջացնել, շինելով նրա վրա և գրելով իմ հիշատակարանը: Աղբյուրի ակնումն հիմնավոր կրապատի մեջ պատված է մի բուտիկա, մեջը գրված հիշատակարան, զմռսած պրոբկով: 1875 թ. մարտի 20-ին վերադառնալով Ռուսաստանից և բոլորի հետ վերջացնելով իմ ջրաղացի շինումը. այս բոլորի վրա ծախսել եմ 1025 ռուբլի»:

Նկ. 2. Աբովյանցի հուշաղբյուրը Կոթիում:

Աբովյանցը, ըստ այս հիշատակարանի, համայնքի համար արել է նաև մի շատ կարևոր գործ, որը ջրաղացի կառուցումն է: Ցավոք, նա այդ մասին իր օրագրում չի նշում: Հիշյալ աղբյուրի շինության մասին հետաքրքիր տեղեկություններ են պարզվել, երբ 1990-ական թվականներին կոթեցի Գուրգեն

---

[9] *Աբովյանց. 1918, 151:*

[10] *Աբովյանց. 1918, 3:*

[11] *Քարկապ բառը Տավուշի և Լոռվա բարբառում ճանապարհի դժվարանցանելի հատվածի իմաստն ունի. օրինակ՝ Լոռու մարզի Շնող գյուղում պահպանվել է «Անաստասի կապ» տեղանունը, որտեղ քարտաշ Անաստասը տևական ժամանակ աշխատել է, մշակել ժայռոտ դժվարանցանելի այդ հատվածը (տե՛ս ԴԱՆ. 2022, Լոռու մարզ, գ. Շնող, բանասաց՝ Սուրեն Հոբոսյան):*

Գանջալյանը «Վարժապետի աղբյուրի» մոտակա տարածքում աշխատանք կատարելիս պատահաբար հայտնաբերել է մի զմռսած շիշ, որի մեջ եղած գրության հեղինակն Աբովյանցի որդին՝ Արծիվ Աբովյանն է: Գրությունը, հուշաղբյուրի վերջնական կառուցմանն է վերաբերում, որն ավարտին էր հասցրել նա իր հոր մահից հետո. «Այդին աղբյուրիս հենց կողքին գտնվող այգին է, ուր ամփոփված է հորս՝ այս աղբյուրի հիմնադիր Հովսեփ Մ. Աբովյանցի աճյունը: Իսկ հին ճանապարհը եղել է հորս դամբարանի մոտով անցնող փոքրիկ ձորականման տեղը ուր անձրև ժամանակները այն աստիճանի ցեխ է եղել, որ սայլերը խրվելով մեջը այլևս դուրս բերելու հնարավորություն չի եղել: 1919 թվի մարտ ամսին սկսեցի այս աղբյուրի ներկա հիմնական կառուցումը որպես հավետ հուշարձան հորս՝ Մեծ-Վարժապետ Հովսեփ Մկրտչի Աբովյանի հիշատակին, իսկ ս. թ.-ի ապրիլի 10-ին աղբյուրի ակը բացելով գտա հիշատակած հիշատակարանը, որը սակայն խոնավություն քաշելով գրեթե փտել էր, և դժվար էր ընթերցվում»: Այս գրության մեջ մեջբերված է նաև Հովսեփ Աբովյանցի՝ կրապատի մեջ թողած հիշատակությունը, որը որդին գտել է աղբյուրի վերջնական կառուցման ժամանակ: Մեջբերման մեջ նշվում է, որ Աբովյանցն աղբյուրը կառուցել է իր ազգականների հիշատակին:

Նկ. 3. Աբովյանցի կնիքը:

Գրվածքի շարունակության մեջ կա մեկ այլ կարևոր տեղեկություն ևս. «Նրա կատարած բարիքներեն ու երախտիքներեն մեր Ղազախի գավառի ժողովրդին ընդհանրապես Կոթի գյուղի հասարակությանը մասնավորապես բազմաթիվ են, անուրանալի, սակայն նշանավոր է մանավանդ այն, որ հայրս առանց ժողովրդից մի կոպեկ անգամ պահանջելու, իր դրամով, ու բնատուր խելքով մեր պապերից մնացած փաստաթղթերի հիման վրա դատ բաց անելով Տաշ-Սալահլու թուրքական գյուղի թրքի աղալարների (ագնվականների) դեմ «Ղարա չալ» կոչված ամբողջ հողերը, որ գտնվում է գյուղիս արևելյան կողմը, վերադարձնում և հաստատում է Կոթի գյուղի հասարակության անունով»[12]: Մեջբերման վերջում Ա. Աբովյանը նկարել է Հ. Աբովյանցի կնիքը (նկ. 3):

Աբովյանցի գերեզմանը (նկ. 4) գտնվում է հիշատակարանում նշված այգու տարածքում, իսկ այգուն կից՝ նրա կառուցած աղբյուրը:

Ըստ գյուղում պահպանված հիշողության՝ Հ. Աբովյանցը կառուցել է նաև մի քանի այլ աղբյուրներ, որոնց մասին գրավոր հիշատակություններ չեն պահպանվել: Դրանցից է, օրինակ, գյուղամիջյան ճանապարհից ներքև՝ ձորում, պահպանվող «Քարկապ» կոչվող աղբյուրը և Ալավերդու շրջանի Մղարթ գյուղի աղբյուրը, որը մինչև այժմ կոչվում է նրա անունով՝ «Հովսեփի աղբյուր»[13]:

[12] *Ա. Աբովյանի ամբողջական գրությունը՝ գրված 1919 թ. ապրիլի 11-ին, հրատարակվել է համայնքի թերթում [տե՛ս «Երիտասարդ Կոթի» (Նոյեմբերյան), 01. II. 2007]:*

[13] *Ղ ա զ ա ր յ ա ն. 2021, 276:*

Մի ավանդազրույց էլ պահպանվել է Բարեկամավանում՝ նրա կառուցած աղբյուրներից մեկի մասին: Ասում են, որ բարեկամավանցիները, տեսնելով Աբովյանցի կառուցած աղբյուրը Կոթիում, խնդրում են այդպիսի մի աղբյուր էլ իրենց գյուղում կառուցել: Նա չի մերժում, միայն թե ասում է՝ «ինչ-որ ասեմ, այդպես էլ պետք է անեք. ամեն մեկդ մի բահ կվերցնեք, առավոտյան կգաք իմ ասած տեղը»: Առավոտյան բոլորը գալիս են մի-մի բահ ձեռքներին:

Նկ. 4. Աբովյանցի տապանաքարը:

Աբովյանցն ասում է՝ «դե հիմա կոտրե՛ք բահի կոթերը»: Տեսնելով չփոթված գյուղացիներին՝ թողնում հեռանում է: Հաջորդ օրը նրանք կրկին գալիս են նշված վայր, և նորից Աբովյանցն պահանջում է՝ «կոտրե՛ք բահի կոթերը»: Բոլորը միասին կոտրում են, իսկ Աբովյանցն ասում է՝ «այ հիմա արդեն վստահ եմ, որ ասածներս ճիշտ կկատարեք»[14]: Օրագրում այս մասին մի համառոտ ակնարկ կա՝ «Դոստլու գյուղի «Հիմնական» անվանյալ աղբյուրի շինարարությունը», որն սկսվել է 1913 թ.-ի դեկտեմբերի 24-ին, և ավարտվել 1914 թ-ին»[15], որտեղ հիմնականում գրված են աղբյուրի շինության ծախսերը: Այժմ Բարեկամավանում կանգուն է Աբովյանցի կառուցած աղբյուրը՝ տեղական կարմիր քարով. կամարակապ այդ աղբյուրն ջրառատն է տարածքում[16]:

Դեպի Գագա Սբ. Սարգսի վանք տանող ճանապահի և ջրհորի վերանորոգումը

Միջնադարյան Հայաստանի նշանավոր վանքերից մեկը՝ Գագա Սբ. Սարգիս վանքը, գտնվում է Կոթի գյուղից 10 կմ արևելք՝ Գագ լեռան վրա (ներկայումս Ադրբեջանի տարածք): Այն բաղկացած է իրար կից երկու եկեղեցիներից և մատուռից[17] (նկ. 5):

Միջնադարում Գագ բերդը մեծաքանակ բնակչություն է ունեցել[18]: Ինչպես նշվում է գրավոր աղբյուրներում, բնակչությունը օգտվել է մերձակա

---

[14] ԴԱՆ. 2022, Տավուշի մարզ, գ. Կոթի, բանասաց՝ Ֆելիքս Մելիքյան:
[15] Աբովյանց. 1918, 140–141:
[16] Վերանյան. 2008, 217–218:
[17] Շախկյան. 1986, 166:
[18] Կարապետյան. 2004, 442:

ջրհորի ջրից և վիմափոր ավազաններից, որտեղ հավաքվում էր անձրևաջուրը (դրանցից մեկը պահպանվել է վանքի հարավային կողմում)[19]:

Վիմագիր արձանագրություններն ու արխիվային վավերագրերը վկայում են, որ վանքը պարբերաբար ենթարկվել է նորոգությունների, ինչպես, օրինակ, 1851 թ. Աղա Սարգիս Վարշամյանի ձեռնարկած և Թիֆլիսեցի որմնադիր Եսայի Նուրինյանցի իրականացրած աշխատանքն է: Ավելի ուշ նորոգչական աշխատանք է արել կոթեցի Արզուման Խաչատրյան Տեր Սարգսյանցը[20]: Մեզ հայտնի վերջին նորոգությունը վերաբերում է հենց ջրհորի և դեպի ուխտավայր տանող ճանապարհի նորոգությանը, որն իրականացրել է Հ. Աբովյանցը. «1877 մարտի 2-ին Գագա Սբ. Սարգսի ջրհորը և ճանապարհը դեպի ջրհորն և ուխտատեղն շինված է: Սկսեցի և շինեցի՝ քիչ մասամբ մնաց անկատար, որի վրա ծախսիլ էի 58 ռ. 80 կոպեկ: Իսկ 1878 ապրիլի 12-ին ավարտեցի՝ իրեք օրվա ընթացքում բանիցնելով օրական վեց մշակ 50-ական կոպեկով՝ և մի ուստա

Նկ. 5. Գագա Սբ. Սարգիս վանքը:

Սերգի Ջանղարյանցին՝ օրական մեկ ռուբլի վարձով, և առանց հաշվելու իմ անգնա աշխատանքը և ձիանաց վարձը՝ այլ միայն հաշվելով աշխատանքի և նրանց ուտելիաց և ըմպելիաց ծախսը ևս մի սուրհանդակի մինչև գյուղ և ետ: Ընդ ամեն յոթանասուն և հինգ ռուբլի 50 կոպեկ: Օրհնյալ է Ած. և փառք հավիտյան ամեն»[21]:

Եզրակացություն

Հովսեփ Աբովյանցի մասին հայտնի տեղեկությունները թույլ են տալիս ենթադրել, որ նա եղել է ոչ միայն իր գյուղի կարևոր անձանցից մեկը, ով իր ունեցվածքն ու գիտելիքները ծառայեցրել է ի նպաստ գյուղի, այլև նշանավոր է եղել շրջանում, ինչի մասին վկայում են նրա կառուցած հուշաղբյուրները, օրագրում պահպանված առանձին էջեր: Հիշատակարանի բովանդակությունը համադրելով դաշտային ուսումնասիրությունների հետ, որոնք վերաբերում են ոռոգմանը, հողերի բաժանումներին, հասարակական վեճերին և այլ հարցերի,

[19] Շ ա խ կ յ ա ն. 1986, 167:
[20] Կ ա ր ա պ ե տ յ ա ն. 2004, 442:
[21] Ա բ ո վ յ ա ն ց. 1918, 4:

կարող ենք պատկերացում կազմել XIX դարավերջում XX դարասկզբին Կոթի գյուղի և հարակից շրջանների կյանքում տեղի ունեցած կարևոր իրողություններ մասին: Քննարկված դրվագներից մեկը, որը վերաբերում էր Գագա Սբ. Սարգսի տարածքի ջրհորի և Կոթիից դեպի վանք տանող ճանապահի բարեկարգմանը, առանձնակի կարևորություն ունի, քանի որ խոսում է հիշյալ ժամանակահատվածում նշանավոր Սբ. Սարգիս վանքի՝ իբրև ուխտավայր կենսունակ լինելու հանգամանքի մասին: Ինչ վերաբերում է հուշաղբյուրների մասին տեղեկություններին, ապա դրանք հարուստ նյութ են պարունակում ինչպես բուն ջրօգտագործման, այնպես էլ ներհամայնքային այլ հարցերի վերաբերյալ:

Անի Սարատիկյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայաստանի երկաթի դարի հնագիտություն, Հայկական լեռնաշխարհի ջրօգտագործման մշակույթ: Հեղինակ է 6 հոդվածի: anisaratikyaniae@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբովյանց Հ. 1918, Օրագիր-հիշատակարան (ձեռագիր), Հովսեփ Աբովյանցի ընտանեկան արխիվ, Երևան, 212 էջ:

Աբովյան Կ. 2001, Տոհմածառ (ձեռագիր), Հովսեփ Աբովյանցի ընտանեկան արխիվ, Երևան, 23 էջ:

Արեշյան Գ., Սիմոնյան Հ., Գասպարյան Ս. 1987, Նորահայտ դամբարաններ Զողազում. – Հայկական ՍՍՀ-ում 1985–1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, մարտի 16–20, զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 6–8:

«Արծագանք» (Թիֆլիս), 18. V. 1886:

Դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ). 2022, Լոռու մարզ, գ. Շնող, Տավուշի մարզ, գ. Կոթի:

«Երիտասարդ Կոթի» (Նոյեմբերյան), 01. II. 2007:

Կարապետյան Ս. 2004, Հյուսիսային Արցախ, գիրք Զ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 616 էջ:

Մեսրոպ Մագիստրոս Արքեպիսկոպոս. 1936, Պատմական տեղեկություններ Հայաստանի հողերի ոռոգման մասին.– «Սիոն» (Երուսաղեմ–Պաղեստին), № 3, էջ 78–82:

Ղազարյան Դ. 2021, Կոթի պատմա–հուշագրական նյութեր, Երևան, հեղ. հրատ., 400 էջ:

«Մշակ» (Թիֆլիս), 12. I. 1895, 19. VII. 1900:

«Նոր-Դար» (Թիֆլիս), 24. VII. 1884:

Շախկյան Գ. 1986, Լոռի. Պատմության քարակերտ էջերը, Երևան, «Հայաստան», 182 էջ:

Շիրմազան Գր. 1962, Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան, «Հայպետգյուղհրատ», 176 էջ:

Սարգսյան Լ. Արագածի փեշերին.– «Երեկոյան Երևան», 12. VII. 1966:

Վերանյան Ս. 2008, Քարացած արցունքներ, Երևան, հեղ. հրատ., 312 էջ:

ОВСЕП АБОВЯНЦ И ЕГО ВОДОСТРОИТЕЛЬНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ

АНИ САРАТИКЯН

Резюме

Ключевые слова: Овсеп Абовянц, Тавуш, Коти, Барекамаван, Алаверди, семейный архив, дневник, памятник-родник, колодец, дорога, строительство.

В XIX–XX вв. на территории Армении велись активные гидростроительные работы. Важной частью этого процесса была территория нынешнего Тавушского марза. Образованные специалисты, одним из которых был Овсеп Абовянц, внесли большой вклад в строительство водохранилищ, родников и оросительных систем на территории области. О подробностях этих строительных работ и текущих затратах узнаем из рукописного дневника Абовянца. Из содержания дневника видно, что у него была высокая репутация в регионе, особенно из-за собственного строительного стиля. Другие документы, хранящиеся в семейном архиве Абовянов, также обогащают имеющиеся у нас сведения о событиях, происходивших в регионе.

Ани Саратикян – младший научный сотрудник отдела ранней археологии Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: археология железного века Армении, культура использования водных ресурсов в Армянском нагорье. Автор 6 статей. anisaratikyaniae@gmail.com

HOVSEP ABOVYANTS AND HIS WATER CONSTRUCTION ACTIVITIES

ANI SARATIKYAN

Summary

Keywords: Hovsep Abovyants, Tavush, Koti, Barekamavan, Alaverdi, family archive, diary, memorial wellspring, well, road, construction.

In the XIX-XX centuries, active water construction works were carried out on the territory of Armenia. An important part of this process was the territory of the current Tavush marz. Educated specialists, one of whom was Hovsep Abovyants, made a great contribution to the construction of reservoirs, springs and irrigation systems in the region. We are informed about the details of this construction works and current costs from his handwritten diary. From the

contents of the diary, it is clear that he had a high reputation in the region, especially because of his own building style. Other documents kept in the Abovyan family archive also enrich the information we have about the events taken place in the region.

Ani Saratikyan – Junior Researcher at the Department of Early Archeology of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA. Scientific interests: Iron Age archeology of Armenia, water resources use in the Armenian Highlands. Author of 6 scientific articles. anisaratikyaniae@gmail.com